01/10.1/19591-11
2011-12-07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՍԱՄՎԵԼ ՆԻԿՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նիկոյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Բաբլոյանի, Մկրտիչ Մինասյանի և Կարեն Ավագյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ առաջարկում ենք՝

1) հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները՝

ա. օրենքի նախագծի վերնագրից հանել «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերը,

բ. 1-ին հոդվածում «2-րդ կետում» բառերը փոխարինել «1-ին մասի 2-րդ կետում» բառերով, իսկ 2-րդ և 3-րդ հոդվածներում «հետը» բառը՝ «մասը» բառով.

գ. անհրաժեշտ է 2-րդ և 3-րդ հոդվածները միացնել և ներկայացնել մեկ հոդվածի տեսքով, քանի որ երկուսն էլ վերաբերում են օրենքի 15-րդ հոդվածին.

2) օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչելու փոխարեն այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Փոխնակ մայրը միաժամանակ չի կարող լինել ձվաբջջի դոնոր։».

3) օրենքի նախագծով նախատեսվող փոփոխությունները ներառել Հայաստանի Հանրապետության կառավարության՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացրած և չորսօրյա նիստերի օրակարգում ընդգրկված «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (փաստաթղթերի համապատասխան կոդերը՝ Կ-1157-02.05.2011, 06.07.2011-ԱՄ-010/0, Կ-1157[1]-02.05.2011, 06.07.2011-ԱՄ-010/0 և Կ-1157[2]-02.05.2011, 06.07.2011-ԱՄ-010/0) փաթեթում:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Բաբլոյանի, Մկրտիչ Մինասյանի և Կարեն Ավագյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

AJV-47-01_2011-12-01_01d10.1d19591-11_2011-12-07

Եզրակացություն

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1 և 28-րդ հոդվածների պահանջները: Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <<Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին>> N 18-Ն որոշման և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի <<Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաոլորտների բնութագրիչները հաստատելու մասին>> N 34-Ա/1 հրամանի համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագիծն ունի չեզոք ազդեցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը կամ չընդունումը ՀՀ պետական բյուջեի մուտքերի և ելքերի փոփոխմանը չի հանգեցնում:

AJV-47-01_2011-12-01_01d10.1d19591-11_2011-12-07

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Նախագծի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

AJV-47-01_2011-12-01_01d10.1d19591-11_2011-12-07

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ *Նախագծով հստակեցվում են հղիության արհեստական ընդհատման և փոխնակ մայրություն հետ կապված որոշակի դրույթներ:*

AJV-47-01_2011-12-01_01d10.1d19591-11_2011-12-07

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մարդու վերաարտադրողական առողջության և վերաարտադրողական իրավունքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Մարդու վերաարտադրողական առողջության և վերաարտադրողական իրավունքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

AJV-47-01_2011-12-01_01d10.1d19591-11_2011-12-07

Նախագիծ
Պ-1270-08.11.2011-ԱՄ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի /այսուհետեւ՝ օրենք/ 2-րդ հոդվածի 2-րդ կետում «վիրաբուժական միջամտություն» բառերը փոխարինել «բժշկական միջամտություն» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ հետը:

ՀՈԴՎԱԾ 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ հետը:

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նախապատրաստումը պայմանավորված է վերարտադրողական նոր տեխնոլոգիաների կիարառման հետեւանքով առաջացող խնդիրների օրենսդրական կարգավորման, ինչպես նաեւ գործող օրենքում առկա հակասությունների շտկման անհրաժեշտությամբ:

Այսպես, այսօր բժշկության ոլորտում կիրառվում է հղիության արհեստական ընդհատման ոչ միայն վիրաբուժական այլեւ դեղորայքային մեթոդը, որը սակայն արտացոլված չէ գործող օրենքում: Հաշվի առնելով այս հանգամանքը, առաջարկվում է համապատասխան հոդվածում հղիության արհեստական ընդհատումը կամ աբորտը սահմանել որպես բժշկական այլ ոչ միայն վիրաբուժական միջամտություն, որը կատարվում է հղիության ընդհատման նպատակով:

Նախագծի երկրորդ եւ երրորդ հոդվածներով նախատեսվում է վերացնել այն դրույթները, համաձայն որոնց գործող օրենքով փոխնակ մորը թույլատրվում էր միաժամանակ հանդես գալ նաեւ որպես ձվաբջջի դոնոր եւ կրել այդ ձվաբջջից ստացված սաղմով հղիությունը: Այս դրույթները ուժը կորցրած ճանաչելու հիմնական նպատակն այն է, որ սեփական ձվաբջջից ստացված սաղմով հղիություն կրելիս փոխնակ մայրը դառնում է ծնված երեխայի կենսաբանական ծնող/մայր՝ այսինք, ապագա երեխան կրում է նրա գենոտիպը, ինչը հակասում է գործող օրենքի 2-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված դրույթին, որտեղ հստակ նշվում է, որ փոխնակ (սուռոգատ) մայրը՝ դոնորական սաղմը իր արգանդում կրած կինն է, որից ծնված երեխան չի կրում նրա գենոտիպը: